ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՏ

Posted on June 25, 2022 by Keghart

Category: Opinions

Շահարկումներ

Ռուբէն Յովակիմեան, Սեն-Ռաֆայել, 15 Յունիս 2022

«Դժբախտ է այն ազգը եւ դժբախտ կը մնայ, որ օտարի կարօտ կը լինի: Ոչ ոք իր հոգու համար մեզ չի օգնի. նա պէտք է տասը բան առնէ մեզանից, որ մի բան տայ»: Րաֆֆի

Համաշարհայնացումի արշաւը կամայ թէ ակամայ հսկայական փոփոխութիւններ ստեղծեց երկրների, ժողովուրդների կենցաղի, ապրելակերպի, քաղաքական գաղափարախօսութեան, բարոյական եւ մշակոյթի ոլորտի, արդիւնաբերութեան եւ անձի հոգեբանութեան վրայ: Արմատանում է այն տհաճ տպաւորութիւնը, թէ հաւաքական տգիտութիւնը,պարզամիտ տխմարութիւնը դառնում են տիրակալ ամէնուրեք: Ինքնուրոյն լինելը, որ անհատականութեան նշան էր, անյայտացել է. քաղաքներ, շէնքեր, մարդիկ եւ խմբեր ամէն տեսակով նմանւում են իրար թէ՛ տեսքով, թէ՛ հոգեբանութեամբ ու կեցուածքով, անշուշտ բացառութիւնները յարգելի են:

Այս ձախողումներից անմաս չի մնացել մեր աւետեաց երկիրը, ո՛ւր նոյն երեւոյթները տեղական երանգներով դառնում են յաճախ աննպատակ եւ անընդունելի, մեր առջեւ եղած մարտահրաւէրներին դիմակայելու դժուար պայմանների համեմատ: Իրաւ է, որ չհասկացանք մեր ճաշակով եւ մեր պահանջների համեմատ նոր երկիր կառուցելու այն ճակատագրական պահը, որ մեզ էր տրամադրուած 90-ականներին, նոյնիսկ անգնահատելի զոհերի գնով ձեռք բերուած յաղթանակը աւելի զօրացրեց թշնամուն մեզ հասցնելով 44-օրեայ դժոխքին:

Պարզ է, որ երեւոյթը նաւթ չունենալը չէր, այլ առողջ բանականութեան բացակայութիւնը եւ սնափառութեան եւ աչառու լինելու ախտը, որ համակել էր մեր ենթադրեալ քաղաքական այրերին, որ երեք տասնամեակ կուրօրէն բաժակաճառի նմանուող ելոյթներով, ոչ մէկ որեւէ լուրջ ներդրում արեցին, թէ՛ տնտեսական, թէ՛ բարոյական քաղաքականութեան, թէ՛ դիւանագիտութեան ոլորտում, այլ մեծ յաջողութեամբ աւերեցին այն ժառանգութիւնը, որ գրաւել էին՝ ստեղծելով այն թերաճ հասարակութիւնը, որ ունենք այսօր, առաջին հերթին դնչկալ դնելով եղած մտաւորականութեան բերանին, նրան հրելով դէպի լուսանցքային տարածք, ոմանց կաշառելով, միւսներին լռեցնելով: Ցաւօք այդ արատը դարձել էր ապրելակերպ:

Հնարաւո՞ր էր, կամ կարո՞ղ էինք անկախութիւն հռչակած երկրում՝ նոր լուրջ հիմքերի վրայ դրուած համակարգ կերտել, ինչպէս արեցին Իսրայէլը եւ Սինգապուրը, որոնց օրինակը առկայ էր: ԱՅՈ, ի նկատի ունենալով հասարակութեան մէջ տիրող նուիրումը եւ զոհուելու պատրաստակամութիւնը յանուն հայրենիքի, որին յաջորդեց աղէտալի արտագաղթը՝ յայտնի են նրա պատճառներն ու հետեւանքները: Իրաւ է նաեւ, որ հեշտ

է առանց որեւէ պատասխանատուութեան քննարկել եւ վերլուծել անցեալի սխալները, բայց կան, որ աններելի են հաւաքական բանականութեան բացակայութեամբ եւ գաղտնիք չէ, որ պաշտօն էին ստանում պատահական կամ ընտանիքի ապիկար անդամներ, որոնք փայլուն ձեւով սատարեցին արդիւնաբերութեան ոչնչացմանը:

Ինչով է տարբեր արդի վիճակը անցեալից:

Իմաստով մեծ չէ տարբերութիւնը, միայն դէմքերն են այլազան, մինչ ապիկարութեան աստիճանն է բարձրացել, բայց նոյն ուժգնութեամբ իրար յօշոտելով փորձում են երկիրը փրկել, բայց անյայտ է, թէ ումի՞ց եւ ինչպէ՞ս, առանց հասկանալու, որ երկիրը ա՛յդ փրկիչներից փրկուելու ստոյգ կարիք ունի: Ցաւալի է, որ բնակչութեան ճնշող մասը, մտաւորականութիւնը ներառեալ, իր վրդովմունքը լռութեամբ է յայտնում՝ լքելով ընտրութիւնները, այլ նոր լուծում դեռ չի գտնուած, իսկ սուտ ու կեղծ կաշառուած փողոց փակողները այն աստիճան վստահութիւն են ձեռք բերել, լկտիութեան եւ լրբութեան հետ մէկտեղ, որ հայրենաբնակների մեծամասնութեանը թուրք անուան տակ փողոցում ալեհերների են ծեծում այլախոհ լինելու պատրուակով, իրենք իրենց երկրի ուղղամիտ, արժանի օրինական տէրը համարելով: Ողբամ քեզ, երկիր, որ նման արկածախնդիրներ, երբեմն ուսեալ եւ տիտղոսաւոր, դեռ չեն հասկացել, թէ որեւէ երկրի ընտրուած ղեկավարը, բոլորի եւ ոչ իրեն քուէարկողների ներկայացուցիչն է եւ պարտադիր յարգանքի արժանի:

Թերեւս տեղին է նշել, որ բարձրագոյն պաշտօն եւ աթոռ զբաղեցնող անձը՝ իր դիրքին համեմատ կեցուածք եւ բառապաշար պէտք ունենայ: Մուրճը ձեռքին եւ «բոլորին պիտի կզեցնենք» բառերով ամբիոն ելնելը վարչապետի կողմից վայել եւ իրաւացի չէր, որի դիմաց հակադիրները աւելի հեռու գնալով ամէն տեսակի պիղծ ու անշնորհք բացականչութիւններով փողոց են փակում եւ եթէ այդ ամպագոռգոռ կոչերին հաւատանք, արդէն մի քանի անգամ ազատուած Շուշին ու Հադրութը պիտի մեր ձեռքին լինէին: Միեւնոյն ժամանակ փողոցային մակարդակի վէճերի ու ծեծկռտուքի հարթակ դարձնել ԱԺ-ի տարածքը նոյնքան անընդունելի եւ անպատկառ է, իսկ պատգամաւորների բացակայութիւնը նիստերից՝ խափանարարութեան համազօր, ոչ մէկ արդարացում ունի:

Ինչ որ կարեւոր մի բան(եր) սխալ է մեր երկրում եւ միթէ այդ չէր պատճառը, որ ունեցանք դժոխային 44 օրը, որ աննախադէպ չէր եւ ամէն անգամ, երբ թշնամին փորձ էր անում ներխուժել եւ արժանի հակահարուած ստանալով հեռանում՝ անմիջապէս համալրում էր իր զինանոցը, իսկ մերոնք՝ նոյն քայլերին դիմելու փոխարէն հաւասարակշռութեան միտումով, ապարանքներ էին կառուցում եւ այսօր փնտրում, թէ ո՞վ է պարտութեան եւ հսկայական կորուստների պատասխանատուն եւ չեն համարձակւում ընդունել, որ բոլորը մեղսակից են:

Ի՞նչ յոյս ունէին նուաստ պետական այրերը, երբ հնարաւորութիւնը կար նախկին N447

գործարանը, որ անուանի էր եւ ճանաչուած նախկին կարգերի օրերին, աւերակի վերածեցին, փոխանակ առիթից օգտուելով ռազմական արդիւնաբերութիւն զարգացնել՝ Իսրայէլին նմանուելով, որ արտադրում եւ նորագոյն բարձր որակի զէնքեր է մատակարարում ամբողջ աշխարհին եւ ինչո՞ւ հնարաւոր չէր գործակցել նրանց հետ եւ Սփիւռքում ապրող մասնագէտներ հրաւիրելու փոխարէն՝ երկրում եղածներին ենթարկել արտագաղթի՝ գլխատելով գիտական հիմնական ներուժը:

Ներքին համոզմունք ունեմ, որ մեր երիտասարդների ստեղծագործական ունակութիւնները այնքան լայն են, որ պէտք եղած պայմանները ապահովելու դէպքում կարող են հրաշքներ գործել: Առիթը ունեցայ լսել հայազգի նոբելեան մրցանակի դափնեկիր կենսաբան Արտեմ Փութափութեանի դրական գնահատականը Երեւանի Թումո դպրոցի աշակերտութեան մասին, որ հայի կերպարը միայն փողոցի ցոյցերին անվայել կեցուածքով աղմկելը չէ: Բազում են, որ խոնարհաբար իրենց վիճակին յարմարուելով քարշ են գալիս, իսկ եթէ նրանց սատարելու միջոցներ ստեղծուեն ուսանելու հայրենի եւ բոլոր օտար նշանաւոր բարձրագոյն համալսարաններում՝ տունդարձի պայմանով, կարճ ժամկէտում կարող ենք ունենալ մասնագէտների բոյլ՝ շատ կարեւոր ոլորտներում: Այս կարող է լինել մեր երկրի ապագայի յաջողութեան գրաւականներից մէկը:

There are no comments yet.